

## Աստուածաշունչի Անձնաւորութիւնը

Կարդա՛  
Յովհ. 5. 31-40

Գիրքերը քննեցէք,  
վասնզի կը կարծէք, թէ  
անոնցմով կրնաք յաւի-  
տենական կեանք ունե-  
նալ: Ահա բուն անոնք  
են, որ ինծի համար կը  
վկայեն:  
—Յովհաննու 5. 39

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Սաղմոս 135-136
- Ա. Կորնթ. 12

սերտողին կը տանի կեդրոն եղող՝ Յիսուս Քրիստոսի: Եւ  
երբ Քրիստոս մեր ականածանքը շահի, մենք այն ատեն  
չատ մօտ կ'ըլլանք մեր հաւատքի կազմաւորումին:

Յիսուս խումբ մը կրօնական առաջնորդներու, որոնք  
չատ լաւ ծանօթ էին Հին Կտակարանին եւ սակայն՝  
հակառակ էին Յիսուսի, ըսաւ. — «Գիրքերը քննեցէք, վասնզի  
կը կարծէք, թէ անոնցմով կրնաք յաւիտենական կեանք  
ունենալ: Ահա բուն անոնք են, որ ինծի համար կը վկայեն:  
Բայց դուք չէք ուզեր ինծի գալ, որ կեանք ունենաք»  
(Յովհ. 5. 39-40):

Աստուածաշունչը սերտելու համար, պէտք է բաց սիրտ  
եւ խուզարկու միտք մը ունենալ: Երբ ի յայտ բերենք, թէ  
Յիսուս է կեդրոնական անձը, որուն Աստուածաշունչը  
կը մատնանչէ, անկէ ետք կրնանք որոշել, թէ ինչպիսի  
կեցուածք պիտի ցուցաբերենք Իրեն:

Մեծ ուրախութիւն պիտի գտնենք երբ հաւատքով  
բանանք մեր սիրտը Քրիստոսի եւ կեանք գտնենք Իր մէջ:

---

Գրուած Խօսքը կ'առաջնորդէ մեզի Քրիստոսի՝  
կենդանի Խօսքին:

**Ե** կեդեցական առաջնորդներու  
համագումարի մը ընթացքին,  
հոգեւոր հովիւ Ըրլ Փալմըրը կը յիշէ  
փորձառութիւն մը, որ ձեւ եւ ըն-  
թացք տուած է իր ուսուցումին եւ  
քարոզութեան, կէս դար շարունակ:

Որպէս աստուածաբանական ճե-  
մարանի աշակերտ, ան առաջնորդած  
էր Սուրբ Գիրքի սերտողութիւն մը,  
որու ընթացքին քաջալերած էր մաս-  
նակցողները, որպէսզի ականածան-  
քով մօտենան Աստուածաշունչի խօս-  
քերուն: Ան կ'ըսէ. — Ես համոզուեցայ,  
որ եթէ մէկը հաւատքով եւ  
ականածանքով կեդրոնանայ բնագրին  
վրայ, Աստուծոյ Խօսքը եղող այդ  
բնագիրը ուշ կամ կանուխ, զայն

Լոուիթիւն,  
Հաճի՛ս

Կարդա՛  
Սաղմոս 46

Հանդարտ կեցէ՛ք ու  
գիտցէք, թէ ես եմ  
Աստուած:  
—Սաղմոս 46. 10

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Սաղմոս 137-139
- Ա. Կորնթ. 13

անկիւն մը՝ Աստուծոյ Հետ խոկումի պահեր ունենալու Համար, որքան պիտի փափաքէինք ունենալ անարձագանգ լուռ անկիւն մը: Սակայն, եթէ կարենանք դուրսէն եկող ձայներն իսկ դադրեցնել, ներքին մտահոգութեան աղմուկներ՝ բառերու վերածուած, պիտի խճողեն մեր միտքերը: Սաղմոսերգուն կ'ըսէ.՝ «Հանդարտ կեցէ՛ք ու գիտցէք, թէ ես եմ Աստուած» (Սաղմ. 46. 10): Սակայն, ինչպէ՞ս կրնանք Հանդարտեցնել մեր Հոգիները իսկապէս եւ գործնականապէս:

Աստուած գիտէ մեր երկողմանի դժուարութիւնները եւ մեզ Հայթայթած է յատուկ «լսողական կրկնոց» մը Հանդարտ պահելու մեր սիրտերը: Ան մեր մտահոգութիւնները կը փոխարինէ Իր խաղաղութեամբ.՝ «Բանի մը Համար Հոգ մի՛ ընէք, Հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գոհութիւնով մէկտեղ, ձեր խնդրանքը Աստուծոյ յայտնի ըլլայ: Աստուծոյ խաղաղութիւնը որ ամէն միտքէ վեր է, ձեր սիրտերն ու միտքերը Յիսուս Քրիստոսով պիտի պահպանէ» (Փիլիպ. 4. 6-7):

Աստուած կու տայ խաղաղութիւն բոլոր անոնց,  
որոնք հանդարտօրէն կը կենան Իր առջեւ:

**Մ**եր աշխարհը Հետզհետէ աւելի  
աղմկոտ վայրի մը կը վերածուի:  
Սակայն, լուրերէն տրուած տեղեկա-  
գիր մը կը յայտնէր, թէ գիտու-  
թիւնը գտած է միջոց մը, իրագոր-  
ծելու Համար բացարձակ լուռութիւն:  
Գիտնականներ վերջերս Հնարած են  
ականջ դնելիք գործիք մը, որ  
կ'արգիլէ ձայնի ալիքները թափան-  
ցելու մեր ականջներէն ներս: Այդ  
մասին գրութիւն մը կայ բնագի-  
տութեան ամսաթերթի մը մէջ, ուր  
կը բացատրուէր, թէ «Կարելի է  
ուսննալ նաեւ ձայնարգելք տուներ,  
առաջացեալ Համերգի սրահներ կամ  
անձայն ռազմանաւեր»:

Երբ փնտռելու ըլլանք Հանդարտ

Փախուստի  
Ճամբաներ

Կարդա՛  
Մարկոս 7. 1-13

Իմ սրտիս մէջ պահեցի  
քու խօսքերդ, որպէսզի  
չմեղանչեմ քեզի դէմ:  
—Սաղմոս 119. 11

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Սաղմոս 140-142
- Ա. Կորնթ. 14. 1-20

**Տ**առ տարեկան ձէննայի համար  
այդ օրը լաւ չսկսաւ: Ամէն ինչ  
որ փորձեց իր ուզածին պէս կար-  
գադրել, հակառակը պատահեցաւ:  
Վիճաբանիլը արդիւնք չտուաւ:  
Երեսը կախելն ու նեղուիլը, նոյնիսկ  
լալը, դարձեալ գործ չտեսան: Ի  
վերջոյ, մայրը յիշեցուց Աստու-  
ծաշունչի այն համարը, որ գոց  
կը սորվեր այդ օրերուն.— «Իմ սրտիս  
մէջ պահեցի քու խօսքերդ, որպէսզի  
չմեղանչեմ քեզի դէմ» (Սաղմ. 119.  
11): Երեւի ձէննա կը մտածէր այդ  
համարին վրայ, եւ անոր համար պա-  
տասխանեց մօրը.— «Բայց մամա,  
չ'ըսեր ես պէտք չէ մեղք գործեմ,  
հապա կրնամ մեղք չգործել»:

Նման չքմեղանքներու եւ բառախաղերու յաճախ կը  
հանդիպինք: Իմ միտքս երբեմն նման պատճառաբանու-  
թիւններ կը ներկայացնէ ինծի: Երբեմն նման փախուստի  
ճամբաներ շատ տրամաբանական կը թուին ըլլալ մեզի,  
մանաւանդ երբ չենք ուզեր հնազանդիլ պատուէրի մը:

Յիսուս այս հարցը ներկայացուց այն օրուայ կրօնական  
առաջնորդներուն, որոնք կը խորհէին, թէ անոնք գտած  
էին փախուստի ճամբայ մը իրենց կրօնական օրէնքներուն  
մէջ (Մարկ. 7. 1-13): Փոխանակ իրենց ծնողները յարգե-  
լու՝ անոնց նիւթապէս օգնելու ճամբով, անոնք իրենց  
բոլոր ունեցածը Աստուծոյ կը նուիրէին, եւ կը պատճա-  
ռաբանէին, թէ բան մը չունին իրենց ծնողներուն տալիք:  
Թէեւ անոնց անհնազանդութիւնը շատ մեծ բան մը չէր,  
սակայն Յիսուս ըսաւ, թէ անոնց վերաբերմունքը ընդունելի  
չէր:

Ամէն անգամ երբ փախուստի ճամբաներ փնտռելու  
ըլլանք, կը նշանակէ, թէ մենք անհնազանդ կ'ըլլանք:

Եթէ նոյնիսկ չմեղանչեմք ընենք՝ մեր Աստուծոյ չհնա-  
զանդելու համար, տակաւին անհնազանդութիւն է այդ:

## Սրսկում Հոգի Թարմացնելու

Կարդա՛  
Եփես. 4. 17-24

Եւ նոր մարդը ձեր վրայ  
հագնիք, որ Աստուծոյ  
պատկերին պէս՝ արդա-  
րութիւնով եւ ճշմարիտ  
սրբութիւնով ստեղծուած:  
—Եփեսացիս 4. 24

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Սաղմոս 143-145
- Ա. Կորնթ. 14. 21-40

նալ: Սակայն, հակառակ այդ իրողութեան, շատ է թիւը  
զայն գործածողներուն, պարզապէս քիչ մը աւելի  
երիտասարդ երեւալու համար:

Անկասկած լաւ երեւալը գէշ բան մը չէ, սակայն աւելի  
կարեւոր է նկատի ունենալ, թէ ինչպէ՞ս կ'երեւինք ներք-  
նապէս: Որքա՞ն պատրաստ ենք զոհողութիւն ստանձնելու  
աւելի լաւ եւ գեղեցիկ նկարագիր մը ունենալու համար:  
Արդեօք մենք յօժա՞ր ենք այդ սրսկումը առնելու մեր  
հոգիին համար: Յօժա՞ր ենք ներարկելու մենք մեզի քիչ  
մը սէր, ազնուութիւն, կարեկցութիւն, համբերութիւն,  
հոգածութիւն, ոչ անձնասէր եւ յարգալիր վերաբերում  
ուրիշներու հանդէպ՝ գեղեցկացնելու համար մեր կեանքերը  
(Եփես. 4. 2-3): Լաւ երեւալու միջոցներ գտնելու համար  
պրպտենք Աստուածաշունչը եւ հոն պիտի գտնենք  
նկարագիր կերտող խօսքեր: Ապա, աղօթքի միջոցով  
աստուածային յատկանիշեր ներարկենք մեր կեանքին: Եւ  
ասոնց կողմնակի ազդեցութիւնները միշտ ալ լաւ են:

Շատ մը մարդիկ մաշկը թարմա -  
ցնող յատուկ սրսկումներ կը  
ստանան առողջապահական պատ-  
ճառներով, սակայն շատեր զայն կը  
ստանան աւելի երիտասարդ երե-  
ւալու համար:

Արտաքին երեւոյթը կարգ մը  
մարդոց համար այնքան կարեւոր է,  
որ անոնք կ'արտօնեն, որ այդ յա-  
տուկ թեղը սրսկուի իրենց մաշկին  
տակ, դէմքի կնճիռները անհետա-  
ցնելու՝ որոշ ժամանակի մը համար:  
վերջը այդ դարմանումը նորէն  
կրկնուելու է:

Սուղ արժող այդ սրսկումը բա-  
ւական սուղ է եւ կրնայ կողմնակի  
ժխտական ազդեցութիւններ ունե-

Աստուածային նկարագիրը լաւագոյն  
գեղեցկութիւնն է աշխարհի վրայ:

## Միշտ Այնտեղ

Կարդա՛  
Սաղմոս 55. 16-23

Իրիկունը, առտուն ու  
կէսօրին պիտի աղօթեմ  
ու հառաչեմ, Անիկա  
պիտի լսէ իմ ձայնս:  
—Սաղմոս 55. 17

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՁ

- Սաղմոս 146-147
- Ա. Կորնթ. 15. 1-28

**Զ**այնասփիւռի մասնագէտներ,  
որոնք կ'աշխատին մեր միսիո-  
նարութեան մէջ, կը պատրաստուէին  
ներկայացնել յատուկ յայտագիր մը  
արբանեակի միջոցով: Ամէն բան  
պատրաստ է, ներառեալ արբանեակի  
կապը: Սակայն, ճիշդ այն վայրկեա-  
նին, երբ պիտի աշխատցնէին  
մեքենան, արբանեակին ազդանշանը  
կորսուեցաւ: Շփոթած մասնագէտներ  
փորձեցին ելեքտրական հոսանքը  
կապել, բայց չյաջողեցան: Յետոյ  
անոնք լուռ մը առին, - արբան-  
եակը չկայ: Բառական իմաստով,  
արբանեակը յանկարծ եւ զարմա-  
նալիօրէն երկինքէն վար ինկած էր:  
Անոն հոն չէր այլեւս:

Երբեմն երբ կ'աղօթենք, կը խորհինք նման բան մը  
պատահած է եւ անձանօթ պատճառով մը Աստուած հոն՝  
Իր տեղը չէ: Սակայն Աստուածաշունչը մեզի մխիթա-  
րութիւն կը բերէ այն վստահութեամբ, թէ Աստուած  
«Երկինքէն վար չէ ինկած»: Ան միշտ տրամադրելի է  
մեզի համար: Ան կը լսէ եւ կը հոգայ:

Իր յուսահատ վիճակին մէջ Դաւիթ կ'ըսէ.- «Իրիկունը,  
առտուն եւ կէսօրին պիտի աղօթեմ ու հառաչեմ, Անիկա  
պիտի լսէ իմ ձայնս» (Սաղմ. 55. 17): Հարց չէ, թէ երբ կը  
կանչենք Աստուծոյ, Ան միշտ կը լսէ մեր աղաչանքները:  
Այս գիտակցութիւնը պէտք է քաջալերէ մեզ եւ զօրացնէ  
մեր սիրտերը: Հաւատալով, թէ Աստուած միշտ կը լսէ  
մեր աղօթքները, Դաւիթ կ'ըսէ.- «Քու հոգի Տէրոջ վրայ  
ձգէ՛, ու ան քեզ պիտի խնամէ» (Կ. 22): Թէեւ Աստուած  
մեր ուզածին պէս եւ մեր ուզած ատեն չպատասխանէ մեր  
աղօթքներուն, սակայն կրնանք միշտ վստահ ըլլալ, թէ  
ըլլայ «իրիկունը, առտուն կամ կէսօրին», Ան միշտ հոն է:

Աստուած միշտ տրամադիր է լսելու իր  
գաւակներուն աղօթքները:

## Տեսնել Աստուծոյ Ձեռքը

Կարդա՛  
Եզրաս 7. 1-10, 27-28

Աստուծոյ բարի ձեռքը  
անոր վրայ ըլլալով՝  
հինգերորդ ամսուան  
առաջին օրը Երուսա-  
ղէմ հասաւ:  
—Եզրաս 7. 9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

■ Սաղմոս 148-150

■ Ա. Կորնթ. 15. 29-58

Ան ինծի թոյլ կու տայ, որ աւելի երկար ապրիմ, ինք պատճառ մը ունի ատոր համար: Անոր համար ես կ'ընեմ այն գործերը, որ կը հաւատամ, թէ ինք կ'ուզէ որ ընեմ»:

Եզրաս քահանան ինքն ալ ունեցած էր այն փորձառութիւնը, թէ «Աստուծոյ բարի ձեռքը իր վրայ էր» երբ ան կ'առաջնորդէր պատուիրակութիւն մը դէպի Երուսապէմ, որպէսզի առաջնորդ ըլլայ նախկին գերիներուն, որոնք եկած էին վերակառուցանելու համար տաճարն ու քաղաքը (Եզրաս 7. 9-10): Եզրաս քաջութիւն եւ զօրութիւն ունեցաւ երբ զգաց, թէ Տէրը իրենց հետ էր իւրաքանչիւր քայլափոխին: Ան կ'ըսէ.— «Իմ Տէր Աստուծոյս ձեռքը իմ վրաս ըլլալուն համար զօրացուց ու իսրայէլէն իշխաններ հաւաքեցի, որպէսզի ինծի հետ դառնան» (Կ. 28):

Երբ զգանք Տէրոջ ձեռքը մեր կեանքին մէջ, ան կը յառաջացնէ խորունկ «չնորհակալութիւն» մը մեր մէջ, եւ զօրաւոր փափաք՝ ընելու այն՝ ինչ որ ինք կ'ուզէ որ ընենք:

Երբ գիտնանք, թէ Աստուծոյ ձեռքը ամէն բանի մէջ է, այն ատեն կրնանք ամէն բան իր ձեռքին մէջ դնել:

Ճէք Պորտըն՝ իր 101-րդ տարեդարձի օրը, առտու ժամը 5-ին կ'արթնայ, եւ ախորժակով մը նախաճաշը ուտելէ ետք, ժամը 6:30-ին արդէն իր իրաւաբանական գրասենեակը կը հասնի սկսելու իր սովորական աշխատանքներուն: Երբ իրեն կը հարցուի իր երկարակեցութեան գաղտնիքը, փաստաբանը ժպտալով եւ սրամտութեամբ կ'ըսէ.— «Պարզապէս մեռնիլ չուզելս է»:

Սակայն ատկէ աւելին կայ: Ճէք Պորտըն, որ 11 տարեկանին մկրտուած էր, հարցազրոյցի մը ընթացքին կ'ըսէ.— «Ես հաստատ կը հաւատամ, թէ Աստուած իր ձեռքը ունի ամէն բանի մէջ, որ կը պատահի: Եթէ

Հետեւէ՛  
Ցուցմունքներուն

Կարդա՛  
Մատթէոս 7. 24-29

Արդ, ով որ իմ  
խօսքերս կը լսէ եւ կը  
կատարէ զանոնք,  
զանիկա պիտի  
նմանցնեմ խելացի  
մարդու մը, որ իր տունը  
վէմի վրայ շինեց:  
—Մատթէոս 7. 24

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԵՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 1-2
- Ա. Կորնթ. 16

ենք: Ճիշդ ասոր համար էր, որ Յիսուս պատուիրեց իրեն հետեւողներուն, որ հետեւին նաեւ իր ցուցմունքներուն: Ան ըսաւ, թէ ան որ կը լսէ իր խօսքերը եւ կը գործադրէ զանոնք, կը նմանի իմաստուն մարդու մը, որ իր կեանքը ապահով եւ ամուր հիմերու վրայ դրած կ'ըլլայ (Մատթ. 7. 24-29): Ան զինք ունկնդրող ամբոխին ըսած էր, թէ միւս երեսն ալ դարձնեն, երկրորդ մղոնը երթան, ներեն թշնամիներուն, եւ ծախեն իրենց ունեցածը ու աղքատներուն բաշխեն (5. 39-44): Սակայն, պարզապէս ցուցմունքներ եւ թելադրութիւններ ստանալը բաւարար չէ: Կարեւորը անոնց հետեւիլն է: «Արդ ով որ իմ խօսքերս կը լսէ եւ կը կատարէ զանոնք, զանիկա պիտի նմանցնեմ խելացի մարդու մը, որ իր տունը վէմի վրայ շինեց» (7. 24):

Յիսուս «յիմար» կը կոչէ ցուցմունքներու չհետեւողները (4. 26): Աշխարհի տեսանկիւնէն, թշնամիներուն ներելը ու աղքատներուն տալը յիմարական արարք մը կրնայ թուիլ, բայց Յիսուսի տեսանկիւնէն, իմաստունի գործ է:

Եթէ կ'ուզես վէմի վրայ հաստատուած կեանք մը ունենալ, հետեւէ՛ Յիսուսի ցուցմունքներուն:

Մանկութեան հաճոյքներէս մէկը  
Օդանաւի օրինակներ շինել էր:  
Ամէն անգամ երբ նոր տուփ մը  
բանայի, առաջին տեսածս օդանաւի  
կառուցումը բացատրող թուղթը  
կ'ըլլար: Սակայն ես պէտք չէի զգար  
անոր հետեւելու: Ես կը խորհէի,  
թէ արդէն գիտէի ինչպէս պէտք էր  
կտորները իրարու քով բերել: Բայց,  
մի քանի կտորներ իրարու փակցնելէ  
ետք, անմիջապէս կը զգայի, թէ  
կարեւոր կէտ մը մոռցած եմ:

Յաճախ դիւրին է խորհիլ եւ  
ըսել, թէ մենք մեր կեանքին մէջ  
ցուցմունքներու պէտք չունինք,  
սակայն վերջը կ'անդրադառնանք,  
թէ շատ մը բաներ իրար անցուցած

## Օգտակար Խօսքեր

Կարդա՛  
Եփեսացիս 4. 25-32

Բնաւ ձեր բերնէն ապա-  
կանեալ խօսք մը թող  
չելլէ, որպէսզի լսողնե-  
րուն շնորհք տայ:  
—Եփեսացիս 4. 29

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՁ

- Առակաց 3-5
- Բ. Կորնթ. 1

է մեր զաւակները պաշտպանել նման աղտոտ խօսքեր լսելէ:

Անյարմար լեզու գործածելու հարցը վէճի նիւթ մը  
չէր Եփեսոսի եկեղեցիին մէջ: Առաքեալը կը պատուիրէր  
հոն եղող հաւատացեալներուն, թէ փրկութեան այդ օրհ-  
նութիւնները արտայայտելու եւ Քրիստոսով նոր կեանք  
ունեցած ըլլալու վկայութիւնը ցոյց տալու համար, հաւա-  
տացեալներ պէտք էր զգոյշ ըլլային իրենց խօսքերուն,  
որպէսզի գայթակղութեանց պատճառ չդառնան (4. 29):

Առաքեալը չէր ուզեր, որ անոնք հին կեանքի նկարագի-  
րը պահէին, որուն մէջ կար ապականութիւն, աղտոտ խօսք,  
հայհոյութիւն, բամբասանք, չարախօսութիւն կամ այնպիսի  
բաներ, որոնք կը վիրաւորեն մարդոց եւ անհամաձայ-  
նութիւն կը ստեղծեն: Այդ բոլորին փոխարէն, ան կ'ուզէր,  
որ Եփեսացիներ իրենց խօսքերով «լսողներուն շնորհք»  
տուած ըլլան եւ քաջալերութիւն՝ պէտք եղած ատեն:

Որպէս հաւատացեալներ, անոնք որոնք կը լսեն մեր  
խօսքերը, թող օրհնութիւն մը ստացած ըլլան:

---

Աստուծոյ Խօսքը պէտք է ձեւաւորէ մեր խօսքերը:

Նոյեմբեր 2008-ին, Միացեալ Նա-  
հանգներու բարձրագոյն ատ-  
եանը նիւթ դարձուց սահմանադրա-  
կան այն օրէնքը, որ կը վերաբերէր  
աղտոտ լեզուի գործածութեան:  
Պետութեան Հաղորդակցութեանց  
Յանձնաժողովը, դատի կանչեց  
հեռասփռումի ընկերութիւն մը, որ  
թոյլ տուած էր երկու հանդիսատեսը  
զուարճացնող մարդոց, որ հասարակ  
եւ աղտոտ լեզուկը գործածեն:  
Հեռասփռող ընկերութիւնը առար-  
կեց ըսելով, թէ երբ աղտոտ լեզու  
գործածելը չի վերաբերիր սեռային  
բաց խօսքերու, յանցագործութիւն  
չէ եւ պէտք չէ պատժուի: Սակայն,  
առարկողներ եղան ըսելով, թէ պէտք

## Պատուէր Սիրելու

Կարդա՛  
Ա. Յովհ. 3. 16-24

Ասիկա է Անոր  
պատուիրանքը, որ Իր  
Որդիին՝ Յիսուս  
Քրիստոսի անունը  
հաւատանք ու մէկզմէկ  
սիրենք:

—Ա. Յովհ. 3. 23

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԵԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԵՋ

- Առակաց 6-7
- Բ. Կորնթ. 2

Անոր ճամբաներէն ընթանաս» (Բ. Օր. 30. 16): Յիսուս ալ շեշտեց սէրը որպէս մեծագոյն պատուիրան.— «Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ» (Մարկ. 12. 30):

Ինչպէ՞ս Աստուած կրնայ պատուիրել սէր: Անոր գերագոյն սիրոյ յայտնութիւնը պատահեցաւ Գողգոթայի խաչին վրայ, Իր Որդին զոհաբերելով որպէս սիրոյ գրաւական: Յիսուսի սիրելի աշակերտը՝ Յովհաննէս կ'ըսէ.— «Ասով գիտցանք Քրիստոսի սէրը, որ Անիկա Իր կեանքը տուաւ մեզի համար...: Ասիկա է Անոր պատուիրանքը, որ Իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի անուանը հաւատանք ու մէկզմէկ սիրենք, ինչպէս մեզի պատուիրեց» (Ա. Յովհ. 3. 16. 23):

Ի՞նչ առիթներ ունինք հնազանդելու Աստուծոյ սիրելու պատուիրանին: Այդ մէկը կրնանք ընել յարգելով մեր ծնողները եւ հոգալով անոնց կարիքները: Մէր եւ գուրգուրանք ցոյց տալով հիւանդ բարեկամի մը: Ազնիւ խօսք մը ըսելով մէկու մը, որ սիրոյ կարիք ունի:

Թող Աստուած օգնէ, որ մենք ալ սիրենք մեր նմանները:

---

Մենք մեր սէրը Աստուծոյ հանդէպ ցոյց տուած կ'ըլլանք երբ կը սիրենք մեր շուրջիները:

**Ս**ինկափուրի մէջ տարեց ծնողներ, որպէս հետեւանք իրենց չափահաս զաւակներուն իրենց երեսէ ձգած ըլլալուն, ստիպուած կ'ըլլան օգնութիւն խնդրել կարգ մը բարեսիրական հաստատութիւններէ եւ պետական աղբիւրներէ: Այս անպատեհ կացութեան ակնարկելով, պետական պաշտօնեայ մը կ'ըսէ.— «Մենք չենք կրնար օրինականացնել սէրը»:

Ամէն պարագայի, Աստուածաշունչի մէջ սիրելը պատուէր մըն է: Այդ էր, որ Մովսէս յայտնեց Իսրայէլի ժողովուրդին ըսելով.— «Արդարեւ այսօր քեզի կը պատուիրեմ, որ Տէրը՝ քու Աստուածդ սիրես եւ

### Կորսուածները

Կարդա՛  
Ղուկաս 15. 4-6

Ուրախ եղէ՛ք ինձի հետ,  
վասնզի իմ կորսուած  
ոչխարս գտայ:  
—Ղուկաս 15. 6

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 8-9
- Բ. Կորնթ. 3

զինք եւ անմիջապէս ուսերուս վրայ առի եւ բերի իր ընկերներուն քով:

Սկովտիացի գրող՝ Ճորճ ՄէքՏանըլտ, կը պատմէ կնոջ մը մասին, որ պզտիկ տղայ մը կը գտնէ անտառի մը մէջ առանձին՝ կորսուած: Երիտասարդ կինը կ'առնէ մանուկը իր թեւերուն մէջ եւ կը տանի տուն եւ գտնելէ ետք անոր հայրը, կը յանձնէ զայն անոր: Այդ կինը, այդ դէպքէն ետք, կը հասկնայ կեդրոնական պատգամը Քրիստոսի աշխարհ գալուն, կորսուած զաւակները փնտռելու եւ գտնելու, եւ ետ իրենց Հօր վերադարձնելու:

Քրիստոսի՝ Որդին Մարդոյ աշխարհ գալու կեդրոնական առաքելութիւնը հետեւեալն է՝ ինչպէս Աստուածաշունչը կ'ըսէ. — «Որդին Մարդոյ եկաւ, որպէսզի կորսուածը փնտռէ եւ փրկէ» (Ղուկ. 19. 10):

Հարց չէ, թէ որպէս կորսուած որքան շեղած եւ հեռուները գացած ենք, կամ որքան շատ կորսուած: Յիսուս եկաւ մեզ փնտռելու եւ փրկելու համար:

Փրկուի՞նք գտնելու համար պէտք է ընդունինք մեր կորսուած ըլլալը:

**Գ** ոլէճական տարիներուս Քոլորատոյի հանրաժանօթ Ռաքի Լերան Ազգային Հանրապարտէզը կ'աշխատէի, որպէս առաջնորդ, փոքրիկ տղաքը տանելու դէպի լեր, հետեւելով յատուկ ուղիներու: Անգամ մը, անոնցմէ մէկը որ քիչ մը տկար էր եւ դանդաղ, ետ մնալով սխալ ուղի մը առաւ: Երբ վերադաճանք կեդրոն, զգացինք որ ան մեզի հետ չէր: Սաստիկ վախցած, անմիջապէս վազեցի կորսուած տղան փնտռելու:

Մութը չհասած, հանդիպեցայ իրեն, պզտիկ լիճի մը եզրին նստած, ամբողջութեամբ կորսուած եւ առանձին: Ուրախութենէս զրկեցի

Ամէն Մարդ Գիտէ  
Ինչ է Սխալը

Կարդա՛  
Հռովմ. 12. 14-21

Չարէն մի՛ յաղթուիր,  
հապա բարիով յաղթէ  
չարին:  
—Հռովմ. 12. 21

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 10-12
- Բ. Կորնթ. 4

Չապէս եղածը կոչեց դիւային արարք: Կործանարար զօրութիւնը այդ դիւային արարքին, պատճառ դարձաւ, որ շատ մը մարդիկ, իրենք զիրենք անդամալուծուած եւ անօգնական զգան: Եւ այդ է լաւագոյն յաջողութիւնը չարին, երբ կարենայ մեզ անզօր զգացնել տալ:

Բայց, մենք անզօր չենք: Մեզմէ շատեր չարին ներկայութեան փորձառութիւնը կ'ունենան թերեւս, աւելի փոքր տարողութեամբ եւ անձնապէս: Անոր հակազդելու համար, Առաքեալը մեզի ուրուագիծ մը կը ներկայացնէ: Ան կ'ըսէ, թէ մենք պէտք է «զգուինք չարէն» (Հռովմ. 12. 9), պէտք է չարին աւելի չարութեամբ պատասխանել (Կ. 17), եւ պէտք է նաեւ յաղթուինք չարէն (Կ. 21):

Չարին իսկական զոհը բարութիւնն է, այն որ Աստուած ծրագրած է որպէս ստեղծագործութեան մէկը մասը՝ բոլորիս վայելքին համար (Ծննդ. 1. 4-31): Բայց Առաքեալը կ'եզրակացնէ, թէ ի վերջոյ չարին զոհը նաեւ յաղթողն է (Հռովմ. 12. 21): Աստուծոյ բարութիւնը աւելի զօրաւոր է:

Ինչպէս լոյսը կը յաղթահարէ խաւարին, նոյնպէս  
ալ բարին կրնայ յաղթահարել չարին:

Արագ ակնարկ մը նետեցէք որեւէ  
Օրաթերթի վրայ, եւ վերնագիր-  
ները պիտի ըսեն, թէ ինչ սխալ  
բաներ կը պատահին աշխարհի վրայ:  
Դիտեցէք հեռատեսիլը, մտիկ ըրէ՛ք  
ձայնասփիւռին, խօսեցէք բարեկամ-  
ներու հետ, եւ դուք բաւական կար-  
ծիքներ պիտի ստանաք, թէ ինչ բա-  
ներ սխալ ընթացքի մէջ են այս  
երկիր մոլորակին վրայ: Որովհետեւ  
սխալ մատնանշելը շատ դիւրին է:

Երբ ահաբեկիչներ արեւանդեցին  
ճամբորդական օդանաւեր Միացեալ  
Նահանգներու մէջ, մէկը ուղղելով  
Փէնթակոնի վրայ, իսկ միւս  
երկուքը Նիւ Եորքի գոյգ երկնա-  
ւաց շէնքերուն, աշխարհ անմի-

Պարզապէս Ուրիշ  
Կիրակի՞ Մը

Կարդա՛  
Գործք 2. 41-47

Անոնք միշտ առաքեալ-  
ներուն վարդապետու-  
թեան... ետեւէն էին:  
- Գործք 2. 42

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 13-15
- Բ. Կորնթ. 5

Ջին դարու հաւատացեալներուն համար (Գործք 2. 41-47), ուրիշ հաւատացեալներու հետ եկեղեցի երթալը մեծ եռանդ ստեղծող երեւոյթ մըն էր: Այդպէս էր կացութիւնը երբ եկեղեցին նոր սկսած էր եւ ամէն մարդ նոր հաւատացեալ մըն էր: Անոնք մեծ խանդավառութեամբ կապուած էին իրարու: Ի՞նչ կրնանք ընել մենք, որպէսզի իւրաքանչիւր Կիրակի մասնաւոր օր մը ըլլայ.-

- Եկեղեցի գնա Աստուծոյ հետ հաղորդակցելու ակնկալութեամբ: Թէեւ Աստուած միշտ մեզի հետ է (Եբր. 13. 5), բայց Ան մեզի հետ է յատուկ կերպով, երբ ուրիշներու հետ մէկտեղ կը հաւաքուինք (Մատթ. 18. 20, Յակոբ 4. 8):

- Եկեղեցի գնա Աստուծոյ մասին սորվելու: Ամէն շաբաթ նոր բան մը կրնանք չսորվուիլ, բայց կրնանք քաջալերուիլ Աստուծոյ Խօսքին ճշմարտութեամբ (Սաղմ. 119. 105):

- Եկեղեցի գնա ընկերակցելու համար ուրիշներու հետ: Մենք իրարու պէտք ունինք: Պէտք է քաջալերենք զիրար եւ աղօթենք իրարու համար (Եբր. 10. 24-25):

**Ա**րեւոտ Կիրակի մը, եկեղեցիի պաշտամունքէն ետք՝ երբ կը քալէի մեր փողոցէն, տեսայ դրացիներէն մէկը, որ իր բակի խոտը կը կտրէր: Սովորականին պէս բարեւեցի իրեն ըսելով.- «Բարեւ, ինչպէ՞ս ես»: Ժխտական շեշտով պատասխանեց.- «Պարզապէս ուրիշ կիրակի մըն է»: Քիչ մը քալելէ ետք, այդ խօսքը մտածել տուաւ ինծի, թէ ինչ ըսել ուզեց մեր դրացին այդպէս ըսելով: Արդեօք ըսել կ'ուզէր.- «Պարզապէս տնային պարտականութիւններ կը կատարեմ - սովորական ընթացքով»

Երբեմն նոյնիսկ եկեղեցի յաճախելը կրնայ պարզապէս ուրիշ սովորական Կիրակի մը նկատուիլ: Առա-

Երբ կ'ուզենք հոգեւոր սնունդ ստանալ, պէտք է եկեղեցի յաճախենք Խօսքին ծարաւը զգալով:

## Այգնհատուրի Բարկութեան Հարցը

Կարդա՛  
Առակաց 16. 21-33

Համբերատար մարդը  
գորաւոր մարդէն աւելի  
լաւ է:  
—Առակաց 16. 32

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 16-18
- Բ. Կորնթ. 6

Ունեցած էր իր դասընկերներուն հետ: Սակայն, բարեբախտաբար ունեցած է հոգացող մայր մը, որ զինք դաստիարակած է Աստուծոյ Խօսքով: Օր մը, անոր կուիւն ետք երբ մայրը վիրաւորուած ձեռքը կը կապէր, Առակաց 16. 32-րդ համարը կը յիշեցնէ. — «Համբերատար մարդը գորաւոր մարդէն աւելի լաւ է, ու իր հոգին կառավարողը՝ քաղաքը գրաւողէն»: Տարիներ ետք, Այգնհատուր տեղ մը գրած է այս հարցին մասին եւ ըսած. — «Ետ նայելով, միշտ յիշած եմ մօրս հետ ունեցած այդ խօսակցութիւնս, որպէս ամենէն արժէքաւոր վայրկեանը իմ կեանքիս»: Անկասկած, իր բարկութիւնը զսպել սորվելով, Այգնհատուր կրցած էր ազդեցիկ կերպով գործակցիլ մարդոց հետ:

Անխուսափելի է, որ չպատահին մեր կեանքին մէջ դէպքեր, որոնք մեզ բարկանալու փորձութեան մէջ ձգեն: Սակայն, Աստուծոյ ներգործելովը մեր կեանքէն ներս, կրնանք զսպել մեր բարկութիւնը: Որքան լաւ է մարդոց վրայ ձգել ազնիւ հոգի ունեցողի տպաւորութիւն մը:

Ան որ կրնայ յաղթել իր բարկութեան, յաղթած կ'ըլլայ գորաւոր թշնամիի մը:

**Յ** ունիս 6, 1944-ին, Տվայթ Տ. Այգնհատուր, որպէս դաշնակից ոյժերու գերագոյն հրամանատար, երկրի վրայ ամենէն գորաւոր մարդն էր: Իր հրամանատարութեան տակ կը գտնուէր ամենէն մեծ բանակը, ազատագրելու Նացի-Քերմանացիներու կողմէ գրաւուած եւրոպական երկիրները: Ինչպէ՞ս Այգնհատուր պիտի կարենար այդքան մեծ բանակ մը առաջնորդել: Մասնակի պատասխանը այս հարցումին, անոր ունեցած արտակարգ հմտութեան մէջ է:

Այգնհատուր միշտ ալ չէ կրցած մարդոց հետ դիւրին շաղուիլ: Երբ դպրոցին մէջ պզտիկ տղայ մըն էր, յաճախ բռունցքի կուիւներ

Ճճճճճճճ  
ԹՈՒՅՔՐ

Կարդա՛  
Մատթեոս 10. 27-33

Անոնցմէ մէկը գետինը  
չիյնար առանց ձեռ ճօրը  
հրամանին:  
—Մատթեոս 10. 29

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՁ  
■ Առակաց 19-21  
■ Բ. Կորնթ. 7

ես կը մխիթարուիմ, երբ կը մտածեմ Յիսուսի այն խօսքին վրայ, որ կ'ըսէ.— «Անոնցմէ (ճնճճճճճճճ) մէկը գետին չիյնար առանց ձեր հօրը հրամանին» (Մատթ. 10. 29): Ան կը տեսնէ, եւ գիտէ ամէն ինչ, որ կը պատահի մեր աշխարհին մէջ:

Առակագիրը կ'ըսէ.— «Տէրոջը աչքերը ամէն տեղ են» (Առակ. 15. 3): Ոչ մէկ բան կրնայ վրիպիլ իր ուշադրութենէն, ներառեալ դուն եւ ես: Աստուած կը հասկնայ եւ կ'արժեւորէ լաւագոյն յատկանիշները մեր հոլթեան: Յիսուս ըսաւ.— «Ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրուած են» (Մատթ. 10. 30):

Զարմանալի է գիտնալ, թէ Աստուած մեր առօրեայէն տեղեակ է իր մանրամասնութեամբ, նոյնիսկ տեղակ է թռչունի մը դժբախտութեան: Երբ Ան գիտէ այդ փոքր մանրամասնութիւնները, կրնանք վստահ ըլլալ, թէ Ան կը տեսնէ եւ կը հոգայ նաեւ մեր մեծ հարցերն ալ, որ մեզի մտահոգութիւն կը պատճառեն: Վստահինք Աստուծոյ:

Նա ճնճճճճճճ կը հսկէ, Գիտեմ զիս ալ կը  
հոգայ:

**Ե**րեկոյ մը, ընթրիքէն ետք, պզտիկ սրճագոյն ճնճճճճճ մը մեր տան առջեւի բաց դռնէն թռաւ եւ ներս մտաւ: Հալածանք մը սկսաւ թռչունին ետեւէն: Ամէն անգամ, որ ամուսինս կը մօտենար անոր, թռչունը կը թռչէր ամէն կողմ, եւք մը գտնելու համար: Մինչեւ կրցանք զինք դուրս բերել, խեղճ թռչունը թռաւ տունին մէջ հոս ու հոն եւ մենք նկատեցինք անոր կուրճքին ելեւեջները սրտին արագ բարախելուն պատճառով:

Երբեմն մենք ալ կը նմանինք այդ պզտիկ թռչունին – սաստիկ մտահոգ, յոգնած եւ վախցած՝ թէ ինչ կրնայ պատահիլ ետքը: Սակայն

Իսկական  
Գործառնություն

Կարդա՛  
Ա. Պետրոս 1. 3-12

Համառօտ կերպով  
ձեզի գրեցի, յորդորելով  
ու վկայելով, թէ այս է  
Աստուծոյ ճշմարիտ  
շնորհքը, որուն մէջ  
հաստատ կեցեր էք:  
—Ա. Պետրոս 5. 12

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 22-24
- Բ. Կորնթ. 8

**Ա** մենէն Հետաքրքրական բանը, որ կախուած է մեր տան գրասենեակի պատէն, վաւերականութեան վկայագիրը մըն է: Անոր վրայ արձանագրուած է Միացեալ Նահանգներու Ապրիլ 2002-ի Անջրպետանաւի թուիչիքին կարգախօսը: Անջրպետանաւին վրայ էր այդ առաքելութեան մասնագէտ Ռէքս Վոլհայմ, որ իր Հետ տարած էր գրութիւն մը առնուած Զհաց Մեր Հանապազորդ-էն, **ՏԵՄՆԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ** խորագրով: Վոլհայմ ղրկած էր ինծի այդ վկայագիրը, որպէս ապացոյց, որ այդ էջը, այս երկրի մթնոլորտէն անդին գացած էր:

Երբեմն պէտք ունինք նման վաւերագրութիւններու, որոնք կը յատկանշեն ճշմարտութիւնը: Եթէ ես այդ գրութիւնը մէկու մը ցոյց տայի եւ ըսէի.— «Այս թուղթը անջրպետանաւին մէջ օդը բարձրացած է», մարդիկ պիտի կասկածէին, քանի որ ես փաստ մը չունէի ատոր համար: Սակայն, երբ անջրպետանաւորդ Վոլհայմ ղրկած է ինծի վաւերականութեան այդ վկայագիրը, ան տուած էր նաեւ անոր ստոյգ ըլլալը:

Ա. Պետրոսի մէջ, առաքեալը ստեղծած է վաւերագրութեան վկայագիր մը իր պատգամին համար, որ կը խօսի Աստուծոյ շնորհքին մասին: 5-րդ գլխուն մէջ ան կը գրէ.— «Համառօտ կերպով ձեզի գրեցի, յորդորելով եւ վկայելով, թէ այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը» (Կ. 12): Պետրոս կ'ուզէ վստահեցնել, թէ իր առաջին նամակին պատգամները — յոյսի, քաջութեան եւ տառապանքի մասին — բոլորն ալ վաւերական են եւ ցոյց կու տան Աստուծոյ շնորհքը:

Կարդա՛ Պետրոսի առաջին նամակը, եւ վստահ եղիր, որ անոր ուսուցումը իսկական գործառնութիւն մըն է:

---

Աստուծոյ վստահիլ կը նշանակէ վստահիլ Անոր Սուրբ Խօսքին:

Բնութեան  
Հրաշալիքները

Կարդա՛  
Յոր 36. 26-33

Ես քու մասիդ ականջով  
լսեր էի, բայց հիմա  
աչքս կը տեսնէ քեզ:  
—Յոր 42. 5

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 25-26
- Բ. Կորնթ. 9

**Մ**եծցած ըլլալով անտառներով  
եւ ջուրերով լեցուն Ամերիկայի  
կեդրոնական արեւմտեան շրջանին  
մէջ, հիացած եմ շրջանի բնութեան  
վայրի կենդանութեան: Սակայն,  
վերջին շրջապտոյտիս, դէպի Գալի-  
ֆորնիայի ծովեզերքը, սքանչացայ,  
երբ տեսայ խունչացող փոկեր, հաջող  
ծովառիւծներ եւ լուռ անտառ մը՝  
հարուստ ծառերով: Տեսայ սագերու  
երամներ շարք կազմած կը գաղթեն,  
եւ կէտ ձուկեր՝ դէպի վեր կը ցայ-  
տեն: Եւ այդ բոլորը միատեղ միլիո-  
նաւոր տեսակի կենդանիներու եւ  
բոյսերու, իրենց համադրումով կը  
կազմեն բնութեան կնճռոտ եւ  
փափուկ հաւասարակշռութիւնը:

Հատ Աստուածաշունչին, այլազանութիւնը բնութեան  
աշխարհի, ծրագրուած է որպէսզի մանկական զմայլանքէն  
աւելի, ներշնչէ մարդոց: Բնութեան խորհուրդները կրնան  
օգնել մեզի հասկացողութեան մը գալու Աստուծոյ հետ,  
որ թոյլ կու տայ երբեմն մեզի համար անարտայայտելի  
եւ անբացատրելի ցաւի եւ տառապանքի:

Այս մէկը կը տեսնենք Յորի դիւցազներգական պատ-  
մութեան մէջ: Մինչ Յոր կը տառապէր, ան չզիտցաւ, թէ  
Աստուած այնքան բարձր համարում ունէր իր մասին, որ  
թոյլ տուած էր Սատանային, որ փորձէր իր հաւատքը  
շարք մը կորուստներով: Ի՞նչ դուրս կու գայ այս բոլորէն:  
Արարիչ մը, որ ունի իմաստութիւնը եւ զօրութիւնը  
ծրագրելու բնութեան հրաշալիքները՝ այնքան մեծ, որուն  
կարելի է վստահիլ նոյնիսկ մեր ցաւին եւ տառապանքին  
մէջ: Իր ահ ու սարսափին մէջ Յոր յայտարարեց. — «Գիտեմ,  
թէ ամէն բանի կարող ես» (42. 2): Վստահէ՛ այդ տեսակի  
Աստուծոյն, ինչ ալ ըլլան պայմանները:

Լաւ է զԱստուած պաշտել բնութեան մէջ, եթէ այդ  
կ'առաջնորդէ մեզի պաշտելու բնութեան Աստուածը:

Տարբեր  
Նպատակներ

Կարդա՛  
Ա. Կորնթ. 1. 18-31

Բայց Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց, որպէսզի ամօթով ընէ իմաստունները:  
—Ա. Կորնթացիս 1. 27

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 27-29
- Բ. Կորնթ. 10

տարեկանին հրաժարեցաւ Կոլֆէն եւ դարձաւ ձիեր բուծանող մը: Ան տարբեր նպատակներ ունէր:

Թերեւս ոմանք նման մտածելակերպ մը յիմարական նկատեն, որ աւելի դրամ շահելէ եւ հուշակ փնտուելէ անդին՝ ուրիշ բանի մէջ կը փնտուեն գոհացումն ու գոհունակութիւնը: Ասիկա մանաւանդ մեծ ճշմարտութիւն է, երբ հարցը Քրիստոսի համար ապրելու ընտրութիւն մըն է: Բայց, աշխարհի ըմբռնած մեր այդ յիմարութեամբ է, որ կրնանք լաւագոյն կերպով ներկայացնել Տէրոջ տարբեր նպատակները աշխարհին: Առաքեալը կ'ըսէ. — «Բայց Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց, որպէսզի ամօթով ընէ իմաստունները եւ աշխարհիս տկարները ընտրեց, որպէսզի ամօթով ձգէ զօրաւորները» (Ա. Կոր. 1. 27):

Աստուծոյ թագաւորութեան եւ հոգեւոր արժէքներուն համեմատ կեանք մը ապրիլը կրնայ յիմարութիւն նկատուիլ աշխարհիկ մարդոց կողմէ, բայց անիկա պատիւ կը բերէ մեր Աստուծոյն:

Պայրըն Նէլսըն՝ Կոլֆ-ի հուշակաւոր մարզիկը, 1945-ին ունեցաւ աներեւակայելի խաղաշրջան մը: 30 մրցաշարքէն ան, շահեցաւ 18 անգամներ - անոնց 11-ը մէկ շարքի վրայ: Եթէ ուզէր Կոլֆ-ը իրեն ասպարէզ դարձնել, թերեւս բոլոր ժամանակներու մեծագոյն խաղցողը կրնար ըլլալ: Բայց այդ չէր իր նպատակը: Անոր նպատակը Կոլֆ խաղալով քիչ մը դրամ շահիլ էր, որպէսզի կարենար գնել ձիերու ագարակ մը եւ իր կեանքը անցընել ընելով իր շատ սիրած գործը:

Փոխանակ շարունակելու իր մարզական ասպարէզը, որուն գագաթը կը գտնուէր, Նէլսըն՝ 34

Կեդրոնի արժէքներ՝ արժէք չեն կրնար ըլլալ մինչեւ չարտացոլացնեն Աստուծոյ արժէքները:

## Պատժել Հովիւը

Կարդա՛  
Ա. Տիմոթէոս 5. 17-25

Աղէկ վերակացութիւն ընող երէցները կրկին պատիւի արժանի թող սեպուիցն, մանաւանդ անոնք, որ կ'աշխատին Խօսքը քարոզելով եւ սորվեցնելով:  
—Ա. Տիմոթէոս 5. 17

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Առակաց 30-31
- Բ. Կորնթ. 11. 1-15

**Թ**ուանա ծրող դասարանի ֆուլթ-պուլի խաղին ներկայ էի, երբ իրաւարարը սուլեց սխալի մը համար եւ խաղը կեցնելով պատիժ տուաւ: Այնպէս կ'երեւի, գնդակը ընդունող տղան զայն կեցնելու համար, թէթեւ շարժումով մը ձեռքով դպած էր գնդակին: Խաղի հաղորդավարը անգլերէն փէսըր բառը՝ որ կը նշանակէ փոխանցող սխալ հնչելով ըսաւ.— «փէսթըրը պատժուեցաւ» (անգլերէն փէսթըր բառը կը նշանակէ հովիւ): Ապա, անմիջապէս սրբագրեց.— «Ըսել կ'ուզեմ փէսըրը»: Միտքէս ըսի.— «Աստուած կրնայ այդ պատիժը տալ կարգ մը եկեղեցիներուն ալ»:

Հովիւներ կատարեալ չեն: Եթէ կատարեալ հովիւ մը կը փնտռենք, այն ատեն առանց հովիւի մնացող եկեղեցիներ բնական պիտի ըլլան: Աստուծոյ Խօսքը կը պատուիրէ մեզի, որ պատուենք մեր հոգեւոր առաջնորդները, մասնաւորապէս «Անոնք, որոնք կ'աշխատին խօսքը քարոզելով եւ սորվեցնելով» (Ա. Տիմ. 5. 17): Իմ կարծիքով, հոգեւոր հովիւի գործը ամենէն դժուար զբաղումն է այս երկրի վրայ: Կ'ապրինք սոփեստացած, արագ ընթացող եւ բարդութիւններով լեցուն աշխարհի մը մէջ, եւ մեր ակնկալութիւնը՝ բարձր մակարդակի իրագործումներու տէր հովիւներ ունենալու, շատ յաճախ անհասանելի չափանիշեր են:

Ուրեմն մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք բարձր իրագործումներ ունեցող եկեղեցոյ անդամներ ըլլալու հարցին վրայ: Անդամներ, որոնք գիտեն յարգել իրենց հովիւը քաջալերական խօսքերով եւ աղօթքով: Գնահատանքի պզտիկ գիր մը կրնայ ոգեւորել հովիւ մը, որ սիրով եւ ուրախութեամբ կատարէ իր ծառայութիւնը:

---

Անտարբեր եւ կարծր մի ըլլար հովիւիդ հանդէպ:  
Քաջալերական բան մը ըրէ այսօր:

Աստուծոյ  
Օգնութեամբ

Կարդա՛  
Ա. Թագ. 7. 2-12

Տէրը մինչեւ այստեղ  
մեզի օգնեց:  
—Ա. Թագ. 7. 12

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Ժողովողի 1-3
- Բ. Կորնթ. 11. 16-63

Սամուէլ քար մը առաւ եւ Մասփայի ու Սենի մէջտեղ կանգնեցուց, ու անոր անունը Աբենեզեր կոչեց, ըսելով, "Տէրը մինչեւ այստեղ մեզի օգնեց"» (Կ. 12):

Երբ կ'երգենք «Հոս ես իմ Աբենեզերս կը հաստատեմ, մինչեւ հոս քու օգնութեամբդ կրցայ գալ, եւ կը յուսամ քու բարի կամքովդ, ապահով տուն պիտի հասնիմ», այս բառերը մեզի կը յիշեցնեն, թէ երբ դժուարութեանց մէջ գտնուինք, միշտ կրնանք զղջումով դիմել Աստուծոյ եւ իրմէ ներում եւ օգնութիւն ստանալ: Ինչ որ ալ ըրած ըլլանք, ինչ անհաճոյ վայրերու մէջ ալ թափառած, Ան պատրաստ է մեզի ընդունելու եւ փրկելու՝ Իր շնորհքով:

Պզտիկ քար մը մեր գրասեղանին վրայ կամ գրադարանին մէկ դարակին վրայ, կրնայ մեր անձնական Աբենեզերը ըլլալ - զօրաւոր եւ տեսանելի յուշարար մը, թէ Աստուծոյ շնորհքով եւ առաջնորդութեամբ մենք հասած ենք մինչեւ հոս՝ մեր կեանքին մէջ, եւ նոյն Տէրը պիտի շարունակէ մեզի հետ ըլլալ մինչեւ վերջ:

Այնքան ատեն, որ Աստուած մեզի հետ է, մենք երբեք պէտք չունինք վախճալու վաղուան գալիքէն:

Աբենեզեր անունը, որ կը գտնենք նաեւ Հոգեւոր երգի մը մէջ, կ'ակնարկէ Իսրայէլի ժողովուրդի պատմութեան այն շրջանին, երբ անոնք կը ջանային կրկին վերադառնալ Աստուծոյ եւ իրենց յարաբերութիւնը զօրացնել Անոր հետ: Անոնց Հոգեւոր առաջնորդը՝ Սամուէլ, կ'ըսէ ժողովուրդին, որ եթէ ձգեն իրենց օտար աստուածները եւ դառնան Տէրոջ, իրենց ամբողջ սրտով, Ան պիտի փրկէ զիրենք իրենց թշնամի Փղշտացիներու ճնշումներէն (Ա. Թագ. 7. 2-3):

Երբ ժողովուրդը հրաժարեցան իրենց մեղքերէն, Աստուած իրենց յաղթանակ տուաւ: «Այն ատեն

Յարատել  
Նուիրում

Կարդա՛  
Յովհաննու 15. 9-17

Երեսիդ առջեւ լեցուն  
ուրախութիւն կայ:  
—Սաղմոս 16. 11

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՁ

- Ժողովողի 4-6
- Բ. Կորնթ. 12

տեւող կենդանի մը: Նոյն բառերը պէտք է նկարագրեն նաեւ մեզ: Երբ մենք նուիրուած ենք Աստուծոյ, պիտի ուզենք միշտ իր հետ ըլլալ, նոյնիսկ երբ Ան բան մը կ'ընէ, որ մեզի չի հետաքրքրեր: Մենք կրնանք հարց տալ.— «Ինչո՞ւ, ո՛վ Տէր», երբ Ան բարկացած թուի (Սաղմոս 88. 14) կամ մեզի կը թուի թէ կը քնանայ (Սաղմ. 44. 23), կամ չարը կը յաջողի (Երեմ. 12. 1): Սակայն, երբ մենք մնանք նուիրուած Աստուծոյ, հակառակ մեր հարցումներուն, մենք անխառն երջանկութիւն կ'ունենանք իր ներկայութեան մէջ (Սաղմ. 16. 11):

Յիսուս գիտէր, թէ մենք կրնայինք շատ հարցումներ ունենալ: Մեզի այդ հարցումներուն պատրաստելու համար, Ան կ'ուզէ մեզմէ, որ իր սիրոյն մէջ բնակինք (Յովհ. 15. 11): Եթէ նոյնիսկ Աստուծոյ միջոցները անբացատրելի ըլլան, Անոր սէրը վստահելի է: Ուրեմն, մենք պէտք է վճռակամօրէն եւ յարատեւաբար մնանք նուիրուած իրեն:

**Մ**էկի շատ հետաքրքրուած չէ հեռատեսիլով: Ան կը նախընտրէ պատուհանէն դուրս նայիլ, քան պզտիկ հեռատեսիլի մը պատառին: Կարդալն ալ գինք չի հետաքրքրէր: Ան ճանչցուած է որպէս գիրքեր «ծամող»՝ բառին իսկական իմաստով: Ամէն պարագայի, ամուսինս եւ ես երբ գիրք կը կարդանք, Մէկի կը մասնակցի մեզի, հոգ չէ թէ իրեն համար հաճելի չէ այդ պահը: Իրեն համար հաճելին մեզի հետ ըլլալն է: Մակի մեր շատ հաւատարիմ շունն է: Որեւէ բանէ աւելի Մէկի կը սիրէ մեզի հետ ըլլալ:

Մեր շունը կարելի է նկարագրել որպէս յամար, վճռակամ եւ յարատեւաբար:

Մենք իսկական ուրախութիւն կը գտնենք երբ սորվինք մնալ Յիսուսի սիրոյն մէջ:

## Նաւարկութեան Դրութիւն

Կարդա՛  
Եսայի 30. 15-22

Իսկ երբ ինքը՝ ճշմարտութեան հոգին գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզ: —Յովհաննու 16. 13

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՁ

- Ժողովողի 7-9
- Բ. Կորնթ. 13

Իսրայէլի ժողովուրդը Եսայի մարգարէին ժամանակ շատ անհրաժեշտօրէն պէտք ունէր այդ ուղղութիւն ճշդող վստահելի գործիքի դրութեան: Եւ Աստուած ուզեց, որ Ինք ըլլար այդ մէկը իրենց համար: Սակայն, հակառակ Աստուծոյ ազդարարութեան, անոնք որոշեցին Եգիպտոս երթալ եւ հոն պաշտպանութիւն գտնել (Եսայի 30. 1-2): Սակայն, Աստուած Իր բարեգթութեամբ խոստացաւ, թէ օր մը, Ինք պիտի ըլլար իրենց առաջնորդը. — «Ձեր ականջները ետեւէն խօսք մը պիտի լսեն, որ կ'ըսէ. — "Ասիկա է ճամբան, ասկէ քալեցէք", երբ աջ կողմը կամ ձախ կողմը խոտորելու ըլլաս» (Կ. 21):

Այսօր, հաւատացեալներ ունին ներքին նաւարկութեան դրութիւն մը: Յիսուս զրկեց Սուրբ Հոգին, որ կ'ապրի մեր մէջ եւ «Ամէն ճշմարտութեան կ'առաջնորդէ (մեզ)» (Յովհ. 16. 13): Եթէ ուղղութեան պէտք ունիս կեանքդ որոշ տեղ մը հասցնելու, քու միջոցներուդ մի՛ վստահիր: Գործածէ Աստուծոյ նաւարկութեան դրութիւնը: Ան վստահաբար քեզ շիտակ ուղղութեամբ պիտի առաջնորդէ:

Սուրբ Հոգին մեր նաւարկութեան դրութիւնն է:

**Ե**րբեք ձեզի հարց եղա՞ծ է, թէ ինչպէս օղանաւորդ մը մէկ տեղէն ուրիշ տեղ մը երթալու իր ուղղութիւնը կրնայ գտնել: Անոնք մասնաւոր գործիք մը ունին, տեսակ մը կողմնացոյց, որ ստեղծուեցաւ 1950-ական տարիներուն: Այդ գործիքն է, որ օղանաւորդին ցոյց կու տայ իր ուղղութիւնը: Օղանաւորդը կը լարէ այդ գործիքը ճամբայ չելած: Եթէ ան իր ճշդուած ուղիէն շեղի, Գործիքը ցոյց կու տայ օղանաւորդին, թէ օղանաւը շիտակ ընթացքի մէջ չէ, որպէսզի ան կարենայ ետ շտկել ճամբան ու ճշդուած ուղիէն շարունակել թռիչքը

## Ճշմարիտ է

Կարդա՛  
Գաղատացիս 1. 1-9

(Անոնք) Աստուծոյ  
Խօսքը կատարեալ  
յօժարութեամբ ընդու-  
նեցին եւ ամէն օր գիր-  
քերը կը քննէին, թէ այս  
բաները ճիշդ են:  
—Գործք 17. 11

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Ժողովողի 10-12
- Գաղատացիս 1

րութեամբ ընդունեցին եւ ամէն օր գիրքերը կը քննէին, թէ այս բաները ճիշդ են»: Ուրիշ խօսքով, Բերիացիներ անմիջապէս չհաւատացին երբ ուրիշ մէկը իրենց բան մը ըսաւ: Անոնք միշտ փորձեցին ստուգել իրենց ըստածը:

Այս իրողութիւնը շատ կարեւոր է նկատի ունենալ մեզի համար ալ, մինչեւ այսօր: Ինչ միջոցներով ալ լսելու ըլլանք Աստուծոյ Խօսքին ուսուցումը – եկեղեցիի միջոցով, Կիրակնօրեայ Դպրոցի, ձայնասփիւռի կամ հեռատեսիլի միջոցով – պէտք է քննենք մեր լսած խօսքերը, մեր Աստուածաշունչին խօսքերուն լոյսին տակ, որ Աստուծոյ ներշնչուած է (Բ. Տիմ. 3. 16-17): Պէտք է «Ջանանք (մեր անձը) ընտիր ցուցնել Աստուծոյ առջեւ... ճշմարտութեան խօսքը շիտակ բացատրելով» (2. 15): Երբ այսպէս կ'ընենք, մենք զոհերը չենք դառնար անոնց, որոնք կ'ուսուցանեն «ուրիշ աւետարան մը», եւ անոնց, որոնք կ'ուզեն «Քրիստոսի Աւետարանը խանգարել» (Գաղ. 1. 6-7): Վստահինք, բայց նաեւ ստուգենք:

Գիտնալ որն է շիտակը՝ առաջին քայլն է  
գիտնալու, թէ ի՞նչ է սխալը:

Վստահէ՛, բայց Ստուգէ: Ամուս-  
սինս կը սիրէ այս խօսքը, որ  
սորված է Ռանըլտ Ռէյկլընէ: Ռէյկլըն  
պաշտօնի վրայ եղած ատեն, որպէս  
Միացեալ Նահանգներու նախագահ,  
կ'ուզէր հաւատալ ամէն բանի, որ  
իրեն կ'ըսուէր քաղաքական հարցե-  
րու շուրջ երբ ուրիշներու հետ գործ  
կ'ուսենար: Սակայն, քանի իր երկրին  
ապահովութիւնը ըստած ճշմար-  
տութենէն կախեալ էր, ան ամէն գնով  
կ'աշխատէր ստուգել ամէն բան:

Գործք 17. 11 Համարը կ'ըսէ  
մեզի, թէ Բերիացիներ նոյնանման  
կեցուածք մը ունէին ճշմարտութիւ-  
նը ճանչնալու մասին: «(Անոնք)  
Աստուծոյ Խօսքը կատարեալ յօժա-

## ԾՉմարի՞տ է

Կարդա՛  
Առակաց 12. 17-22

Մարդիկ կան, որոնց  
անմիտ խօսքերը սուրի  
պէս կը խոցոտեն, բայց  
իմաստուններուն լեզուն  
բժշկութիւն է:  
—Առակաց 12. 18

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՁ

- Երգ Երգոց 1-3
- Գաղատացիս 2

մեր բառերով, կը վիրաւորենք եւ կը բաժնենք տարիներու բարեկամութիւններ եւ յարաբերութիւններ: Անոր համար, զարմանալի չէ, երբ Տէրոջ առջեւ զգուելի նկատուող եօթը բաներէն մէկը՝ «Եղբայրներուն մէջ կռիւներ ցանող մարդը» կը նկատուի (Առակ. 6. 16-19):

Ինչպէ՞ս կրնանք այդ ցանկին մէջ չիյնալ: Ամէն բանէ առաջ պէտք է զգոյշ ըլլանք, թէ ինչ կ'ըսենք: Բամբասանք եւ չարախօսութիւն պէտք է դուրս դնենք մեր խօսակցութենէն: Պարծենկոտութիւն, ինքնագովութիւն, ստախօսութիւն, զրպարտութիւն եւ աղտոտ խօսքեր, որոնք կը վիրաւորեն եւ կը բաժնեն, պէտք չէ մեր խօսակցութեան մաս կազմեն: Անոնց փոխարէն գործածենք այն խօսքերը, որոնք սէր կը սփռեն եւ բուժելու զօրութիւն ունին, եւ որոնց մէջ տեղ գտած է գուժը եւ ճշմարտութիւնը: Բառեր, որոնք յարաբերութիւններ կը զօրացնեն եւ կ'ամրապնդեն: «Դանակը» մէկըի դնենք, եւ գործածենք օգտակար եւ բուժող խօսքեր:

Մեր խօսքերը զօրութիւն ունին կառուցանելու, եւ միեւնոյն ատեն՝ քանդելու:

**Ա**ռակաց գիրքին հեղինակը կը նկարագրէ անմիտ մարդը, որպէս մէկը, որուն «անմիտ խօսքերը սուրի պէս կը խոցոտեն» (Առակ. 12. 18): Մեր լեզուն կարելի է նմանցնել Զուհիցերական այն դանակին, որ բազմաթիւ շեղբեր ունի եւ շատ մը տարբեր ձեւերով մենք այդ շեղփերը գործածելով կը վիրաւորենք եւ կը կործանենք զիրար: Վատառողջ կեցուածք, բարկութիւն, գրգռութիւն, յուսախաբութիւն եւ անհամբերութիւն – նոյնիսկ հոգեկան ճնշում, յանցանք եւ անապահովութիւն – բոլորն ալ պատճառ կ'ըլլան մեր լեզուին սխալ գործածութեան: Եւ երբ կը կտրենք

## Հնազանդէ՛ Կոչից

Կարդա՛  
Մարկոս 1. 16-20

Անոնք ալ շատ մը  
իրենց ուռկանները  
թողուցին ու Անոր  
ետեւէն գացին:  
—Մարկոս 1. 18

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Երգ Երգոց 4-5
- Գաղատացիս 3

Կը լսէ:

Երբ Յիսուս իր առաջին հետեւորդները կանչեց, անոնք անմիջականօրէն պատասխանեցին իր կոչին: Այդ ձկնորսներուն եղած կոչը յանկարծական էր: Հակառակ ատոր, «Անոնք... շուտ մը իրենց ուռկանները թողուցին ու Անոր ետեւէն գացին» (Մարկ. 1. 18): Մարկոս Աւետարանիչ, թերեւս կ'ուզէ տպաւորել ընթերցողները Յիսուսի հեղինակութեան մասին, անոր համար կ'ըսէ, թէ անմիջապէս Անոր ետեւէն գացին: Երբ Յիսուս կոչ ըրաւ այդ ձկնորսներուն, անոնք անմիջապէս հնազանդեցան իրեն, անոր համար որ, մարդոց օգնելը՝ երկինքի թագաւորութեան կարենալ մտնելու, աւելի կարեւոր արկածախնդրութիւն մըն էր եւ մեծ տեսիլք մը, քան ձկնորսութիւնը:

Երբ Յիսուս կոչ կ'ընէ իրեն հետեւելու, Ան չ'ուզեր, որ ուշանանք: Ան անմիջապէս հնազանդութիւն կ'ակնկալէ, երբ հարցը բարի լուրը ուրիշներուն փոխանցել է: Այսօր մէկուն փոխանցէ փրկութեան պատմութիւնը:

Կը պահանջուի պատգամաբերներ՝ տանելու բարի  
լուրը:

Վերջերս կարդացի Հրամանա-  
տար Ռէյ Պէյքըրի մասին, որ  
ուազմական թուիչքներ կատարած էր  
Վիէթնամի պատերազմի ընթացքին:  
Ան մարզուած էր, շատ մը այլ  
օդաչուներու շարքին, գօրանոցէն  
դուրս գալ եւ օդանաւերուն մէջ  
ըլլալ, ամէն անգամ երբ թռչող  
ուումբի մը ձայնը լսէին: Շատ մը  
անգամներ, ընթրիքի պահուն, պէտք  
էր ձգէր իր ճաշի պնակը եւ վազէր  
դէպի ումբակոչ: Ան մարզուած էր  
նման կոչի պատասխանել կատարեալ  
հնազանդութեամբ: Ան այնքան լաւ  
մարզուած էր, որ օր մը, երբ արձա-  
կուրդի մէջ էր, ճաշարանէ մը դուրս  
կը վազէ, երբ զանգի մը ձայնը

## Ետերը Տեսնել

Կարդա՛  
Եբր. 11. 13-16, 23-27

Ասոնք ամենքն ալ  
հաւատքով մեռան՝  
խոստումները չառած,  
հապա հեռուէն տեսան  
զանոնք:  
—Եբրայեցիս 11. 13

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Երգ Երգոց 6-8
- Գաղատացիս 4

պիտի ըլլայ, Աստուած ի՞նչպէս պիտի պատասխանէ մեր աղօթքներուն: Սակայն, ինչ որ կրնանք գիտնալ, մեր ուր եղած ըլլալն է: Հարցը այդպէս է երբ հաւատքով չէ:

Եբրայեցիս 11ր՝ «հաւատքի գլուխը», երկու իրողութեանց մասին կը խօսի: Կարգ մը մարդիկ, Հին Կտակարանի ժամանակ, կրնային տեսնել հաւատքով: Այնտեղ կը խօսուի Նոյի, Աբրահամի եւ Սաուայի մասին, որոնք բոլորն ալ մեռան հաւատքով, «խոստումներ չառած, հապա հեռուէն տեսան զանոնք ու ողջունեցին», եւ յառաջ նայեցան «լաւագոյն... երկնային գաւառի մը» (Կ. 13, 16): Երկինքի խոստումին հետ նաեւ, 27-րդ համարը կ'ըսէ, թէ Մովսէս հաւատքով «անտեսանելին կը տեսնէր», այլ խօսքով՝ Քրիստոսը:

Երբ չենք գիտեր, թէ օրը ինչ կրնայ բերել մեր մաքարումներուն որպէս արդիւնք, Քրիստոսի հաւատացողներ կրնան հաւատքով կրնան տեսնել յառաջ՝ հոն ուր կ'երթան՝ երկնային տուն մը, ուր պիտի ապրինք Յիսուսի հետ:

---

Երկինք ըլլալու խոստումը, մեր յաւիտեմական յոյսն է:

**Ա**նցեալ ամառ, ամուսինս եւ ես մեր քաղաքէն դէպի Շիքակօ գացինք շոգեկառքով: Մեր նստած ավթոռները դէպի ետ կը նայէին, եւ մեր տեսածը այնտեղ էր, ուր եղած էինք, եւ ոչ թէ ուր կ'երթայինք: Շէնքեր, ծառեր, լիճեր, մեր դիտած պատուհանէն դուրս կը թռչէին զիրենք անցնելէ ետք: Չսիրեցի այդ գնացքը: Պիտի նախընտրէի տեսնել դէպի առաջ՝ հոն ուր կ'երթայի:

Երբեմն մեր կեանքի ընթացքին ալ այդպէս կը զգանք: Շատ կը փափաքինք մեր առջեւը տեսնել, որքան կարելի է: Պիտի ուզէինք գիտնալ, թէ կացութիւնը ի՞նչ

Մոռցուած  
Աշխատաւորը

Կարդա՛  
Եբր. 6. 9-20

Քանզի Աստուած  
անիրաւ չէ, որ ձեր  
գործը մոռնայ ու այն  
սէրը, զոր... ցուցուցիք,  
որ իր սուրբերուն ծա-  
ռայեցիք ու կը  
ծառայէք:  
—Եբրայեցիս 6. 10

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Եսայի 1-2
- Գաղատացիս 5

արուեստի այդ գլուխ գործոցին ետեւ գտնուող մարդը,  
գրեթէ ամբողջութեամբ մոռցուած է:

Նոյնպէս, երբեմն, երբ կը ծառայենք մեր Տէրոջ, մենք  
ալ կը զգանք, թէ մոռցուած ենք կամ վարագոյրին ետեւ  
կը գտնուինք, եւ ոչ ոք կը ճանչնայ մեզ: Հոգեւոր ծա-  
ռայութիւններ երբեմն կը կատարուին ամբողջ կեանքի  
մը ջանքերով եւ կը մնան առանց գնահատուելու՝ այն  
մարդոց կողմէ, որոնց ծառայած ենք Յիսուսի անունով:  
Սակայն, ուրախ լուրը այն է, որ երբ մարդիկ չճանչնան  
ու չգնահատեն, Աստուած գիտէ եւ կը գնահատէ: Եբր. 6.  
10-ը համարը կ'ըսէ.— «Քանզի Աստուած անիրաւ չէ, որ  
ձեր գործը մոռնայ, ու այն սէրը, որ իր անուանը համար  
ցուցուցիք, որ սուրբերուն ծառայեցիք ու կը ծառայէք»:

Ի՞նչ հիանալի խոստում: Մեր Երկնաւոր Հայրը երբեք  
պիտի չմոռնայ մեր՝ իր անունով կատարած ծառայութիւնը:  
Այս իրողութիւնը յաւիտենապէս աւելի կարեւոր է, քան  
ամբոխի մը ծափահարութիւնները:

**Ա**շխարհի գրեթէ բոլոր մար-  
դիկ ծանօթ են Հարաւային Տա-  
քոթայի Ռաշմօր լերան վրայ  
գտնուող այն ցցուն ժայռերուն,  
որոնց վրայ փորագրուած են Ամե-  
րիկայի նախկին նախագահներուն  
հսկայ դիմանկարները: Թէեւ միլիո-  
նաւորներ ծանօթ են Ռաշմօր լերան,  
սակայն յարաբերաբար քիչեր գիտեն  
անունը Տուան Ռապինարնի՝ Հարա-  
ւային Տաքոթայի պատմաբան, որ  
յղացած էր այդ քանդակագործու-  
թեան գաղաբարը եւ դեկավարած  
այդ նախաձեռնութիւնը:

Պատմական այդ կոթողը, իսկա-  
պէս հիանալի եւ խիստ գնահատուած  
իրագործում մըն է: Սակայն,

Քրիստոսը հանեցնելու ծառայութիւնը, աւելի մեծ  
վարձատրութիւն ունի, քան հանրային ծափողջոյններ:

## Հիւրասիրութեան Ետեւ Ըլլալ

Կարդա՛  
Հռովմ. 12. 3-13

Իրարու հիւրասիրութիւն  
ցուցուցէ՛ք առանց  
տրտունջ ընելու:  
—Ա. Պետրոս 4. 9

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Եսայի 3-4
- Գաղատացիս 6

«Հիւրասիրութեան ետեւ է եղէք» (Հռովմ. 12. 13), ձեռով մը ան կոչ կ'ընէ մեզի յարաբերութեան մէջ ըլլալ կարիքաւոր մարդոց հետ: Դիւրին գործ մը չէ:

Հեղինակ մը կը բացատրէ Հիւրասիրութիւնը տեսակ մը մարդոց կարիքներուն հասնիլ, մեր կեանքի ամբողջ ընթացքին – մարդոց, որոնք կրնան հեռու ըլլալ իրենց մշակոյթէն, երկրէն, բարեկամներէն, ընտանիքէն կամ նոյնիսկ Աստուծոմէ: Այդ հեղինակը կը գրէ. – «Հիւրասիրութիւն ուրեմն կը նշանակէ հիմնականին մէջ ստեղծել ազատ միջոց մը, ուր օտարականը կրնայ մտնել եւ բարեկամ դառնալ հոն եղողներուն, փոխանակ թշնամիի: Հիւրասիրութիւնը մարդոց փոխել չէ, այլ տրամադրել անոնց տեղ մը, ուր փոփոխութիւնը կարելի կը դառնայ:

Ուր որ ալ բնակելու ըլլանք – տուն, գիշերօթիկ, նոյնիսկ բանտի խուց – կրնանք Հիւրասիրել մարդոց եւ ցոյց տալ Քրիստոսի սէրը: Հիւրասիրութիւն կը նշանակէ տեղ տալ, թէ հոգեպէս եւ թէ ֆիզիքապէս կարիք ունեցող մարդոց:

Հիւրասիրութիւնը կրնայ լեցնել պարապութիւնը  
առանձին հոգիի մը:

Նոր Կտակարանին մէջ Հիւրասիրութիւնը կարեւոր յատկանիշ մըն է Քրիստոնէական կեանքի: Ան տեղ գտած է եկեղեցական առաջնորդներու նկարագրի յատկանիշերու ցանկին մէջ (Ա. Տիմոթ. 3. 2, Տիտոս 1. 8), եւ յանձնարարուած է իւրաքանչիւր Քրիստոսի հետեւողի, որպէս սիրոյ արտայայտութիւն (Հռովմ. 12. 13, Ա. Պետ. 4. 9): Սակայն, Հիւրասիրութեան նշանակութիւնը ավելի խոր իմաստ ունի, քան ազնիւ Հիւրընկալ մը ըլլալ եւ մեր տուններուն դռները բանալ Հիւրերու առջեւ: Յունարէն «Հիւրասիրութիւն» բառը կը նշանակէ «սիրել օտարականները»: Երբ Պօղոս Առաքեալ կ'ըսէ

Ստեղծագործութիւն՝  
Ըստ Նոր Կտակարանի

Կարդա՛  
Եփեսացիս 1. 3-6

Ինչպէս մեզ անով,  
աշխարհի սկիզբէն  
առաջ ընտրեց:  
—Եփեսացիս 1. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԵՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ

- Եսայի 5-6
- Եփեսացիս 1

որ ան ծածուկ պահած էր ստեղծագործութենէն առաջ:

«Եկէ՛ք իմ հօրս օրհնածները, ժառանգեցէք այն թագաւորութիւնը, որ պատրաստուած է ձեզի համար աշխարհի հիմնադրութենէն ի վեր» (Մատթ. 25. 34): Երկիրը ստեղծուելէ առաջ, Աստուած կը ճանչնար մեզմէ ամէն մէկս եւ գիտէր նաեւ մեր ապագան:

«Ինչպէս անով ընտրեց մեզ աշխարհի հիմնադրութենէն առաջ» (Եփես. 1. 4): Ստեղծագործութեան գործը սկսելէ առաջ իսկ, Աստուած կը ճանչնար իր զաւակները:

Նոր Կտակարանի ճշմարտութիւնները կը բերեն մեզի այն ճշմարտութիւնը, թէ Աստուծոյ մեզի ճանչնալն ու իր յաւիտենական խորհրդաւորութիւնները մեր մասին, ցոյց կու տան իր յատուկ ստեղծագործութիւնը մարդկութեան՝ ներկայացուած է Ծննդոցի մէջ: Մենք միայն երկիւղածութեամբ կրնանք խոնարհիլ այն Աստուծոյ առջեւ, որուն գիտութիւնն ու ստեղծագործելու զօրութիւնը յաւիտենական է իր բնութեամբ եւ անսահման զօրութեամբ:

**Ե**րբ մտածելու ըլլանք սքանչելի ստեղծագործութեան մասին - թէ ինչպէս Աստուած խօսեցաւ եւ տիեզերքը գոյութեան կանչեց - ընդհանրապէս կը մտածենք Հին Կտակարանի պատմութեան մասին: Սակայն, հետաքրքրական է Նոր Կտակարանը քննել, տեսնելու համար, թէ Աստուածաշունչի այդ բաժինը ինչ կ'ըսէ ստեղծագործութեան մասին: Ստորեւ կարգ մը հաստատանքներ այդ ուղղութեամբ. -

«Առարկաներով պիտի բանամ բերանս, եւ պիտի արտայայտեմ աշխարհի հիմնադրութենէն ի վեր ծածկուած բաները» (Մատթ. 13. 35):

Աստուած կը յայտնէ մեզի բաներ,

Իւրաքանչիւր անձ ինքնուրոյն արտայայտութիւնն է Աստուծոյ սիրոյ ծրագրին:

## Վերադարձիր

Կարդա՛  
Ովսէ 14

ԱՆՈՆԵՅ անհաւատութիւնը  
պիտի բժշկեմ:  
—Ովսէ 14. 4

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷԿ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՁ

- Եսայի 7-8
- Եփեսացիս 2

**Ի**սրայէլի ժողովուրդը Հաւատափոխ եղած էր եւ Աստուած ուզեց որ Ովսէ մարգարէն իմացնէ անոնց, թէ Ինք որքան ցաւ կը զգայ ասոր համար: Ովսէի առաջին գլուխներուն մէջ կը կարդանք տարօրինակ պատմութիւն մը: Աստուած կը պատուիրէ մարգարէին, որ Գոմեր անունով պոռնիկ կնոջ մը հետ ամուսնանայ, ցոյց տալու ժողովուրդին, թէ ինչպէս Հաւատարիմ ամուսին մը, անհաւատարիմ կին մը կ'ուեննար: Ովսէ մարգարէն ունեցաւ այն ցաւին նման փորձառութիւն մը, զոր Աստուած ունեցաւ Իսրայէլի անհաւատարմութեան պատճառաւ:

Ինչպէս մարգարէն գրած է իր գիրքի վերջաւորութեան, հակառակ այն ցաւին, որ Իսրայէլի ժողովուրդը պատճառած էր ապրող Աստուծոյ, Ան տակաւին կը խոստանար բժշկել եւ ներել իրենց, եւ բարգաւաճում շնորհել իրենց կեանքին, եթէ ապաշխարելով դարձի գալու ըլլային.— «Ես պիտի բժշկեմ անոնց անհաւատարմութիւնը», կ'ըսէ Աստուած, «Ձանոնք յօժարութեամբ պիտի սիրեմ... Անոնք իմ հովանիիս տակ պիտի բնակին» (Ովսէ 14. 4-7):

Այն մարդը, որ իր կռնակը կը դարձնէ Աստուծոյ, ընդհանրապէս կը յատկանշուի յանցանքով եւ դժգոհութեամբ: Իսկապէս եւ ճշմարտապէս վերստին ծնունդ ունեցած Հաւատացեալը, եթէ պատահի որ կրկին իյնայ մեղսալի կեանքի մը մէջ, անիկա խորապէս կը զգայ իր գործած անհաւատարմութեան վնասին ծանրութիւնը:

Ինչպէս շնորհքի Աստուածը Իսրայէլի ժողովուրդին ներում եւ առատութիւն պարգեւեց, Ան Հանգստութիւն կը պարգեւէ սրտանց ապաշխարողներուն (Ա. Յովհ. 1. 9):

Ուշ չէ երբեք նոր սկիզբ մը ունենալու Աստուծոյ հետ:

Քաղցր  
Փառաբանութիւն

Կարդա՛  
Կողոսացիս 3. 12-17

Քրիստոսի Խօսքը ձեր  
մէջ բնակի առատապէս  
...Երգերով ձեր  
սիրտերուն մէջ,  
շնորհքով Աստուած  
օրհնելու:  
—Կողոս. 3. 12-17

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ  
■ Եսայի 9-10  
■ Եփեսացիս 3

**Տ**արիներ առաջ ամուսինս խուճմբ  
մը երկրորդական վարժարանի  
աշակերտներ միսիոնարական ծառա-  
յուլթեան համար տարաւ քաղաքի  
մը քրիստոնէական համայնքի մը  
դպրոցը, նորոգուլթեան աշխատանք-  
ներ կատարելու համար: Սակայն,  
դժբախտաբար, ամուսինս միսիոնա-  
րական այդ շրջապատյտէն մի քանի  
օրեր առաջ արկածով մը ոտքին  
մէկը վիրաւորեց եւ ստիպուեցաւ  
անհիւաթուռի վրայ կատարել իր  
վերականգուի պաշտօնքը: Քիչ մը  
յուսասխար, եւ սակայն այդ վիճա-  
կով, ան ուզեց շարունակել իր  
պատասխանատուութիւնը:

Երբ անոնք կ'աշխատէին դպրոցի  
չէնքին առաջին յարկին վրայ, կարգ մը աղջիկներ երրորդ  
յարկի վրայ պատեր կը ներկէին: Ամուսինս գետնայարկի  
վրայ, իր անհիւաթուռին մէջ նստած, կ'ունկնդրէ այդ աղջիկ-  
ներուն փառաբանութեան երգերը: Աղջիկներուն երգած  
փառաբանութեան երգերու կրկներգներէն ամուսինս  
խորապէս կ'ազդուի եւ կը հմայուի: Ակնարկելով եղածին,  
ան կ'ըսէ.- «Կեանքիս մէջ ամենէն գեղեցիկ երաժշտու-  
թիւնն էր որ կը լսէի, եւ իսկապէս հոգիս վերացաւ այդ  
փառաբանութեան երգերէն»:

Կողոսացիս 3-րդ գլուխը կը յիշեցնէ մեզի ըսելով.-  
«(Թող) քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի առատապէս՝  
որպէսզի ամբողջ իմաստութեամբ սորվեցնէք իրարու եւ  
խրատէք զիրար սաղմոսներով, օրհներգներով ու հոգեւոր  
երգերով, շնորհակալութեամբ երգելով Աստուծոյ՝ ձեր  
սիրտերուն մէջ» (Կ. 16): Ինչ բան որ կ'ընենք այսօր, թող  
մեր կեցուածքը փառաբանութեան կեցուածք ըլլայ: Չենք  
գիտեր երբ եւ որուն քաջալերած կ'ըլլանք:

Յոյսը կրնայ կրակ առնել քաջալերանքի փոքր  
կայծէ մը:

# ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Եթէ կը Բանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ, կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրօնին վրայ եւ դրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.-

**Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝**  
**Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն**  
**Նիկոլ Դումանի Փողոց, 22**  
**Երեւան, Հայաստան**  
**հեռ. (374-10) 26-36-56**

**Սփիւնքի հասցէ՝**  
**Armenian Missionary Association**  
**31 West Century Road**  
**Paramus, NJ 07652**  
**Tel. 201.265.2607 - E-mail: amaa@amaa.org**

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....

-----  
Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....